

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

Աստվածաբանության ֆակուլտետի խորհրդի 2015թ նոյեմբերի 13-ի նիստի

Ներկա էին՝ պ.գ.թ., դոց. Անուշավան Եպս. Ժամկոչյան (խորհրդի նախագահ), **դոցենտ Ա. Յ. Բալյան** (խորհրդի քարտուղար), **դոցենտ Ա. Է. Յովհաննիսյան**, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ **Ռ. Յ. Վարդանյան**, գիտ. դոկտ., պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Յ. Գ. Ավետիսյան**, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Լ. Ա. Սարգսյան**, ասիստենտ Վ.Վ. Խաչատրյան, փ.գ.թ. դոց. **Պ. Բարսեղյան**, պ.գ.դ. **Ս. Ս. Մկրտչյան**, Յայ եկեղ. պատմ և եկեղեց. ամբ. պատմ. գիտ. դոկտ. Ա. Ս. Սահակյան, փ.գ.թ. դոց. **Գ. Ա. Սարգսյան**, դսխ. **Գ. Յ. Ղուլչյան**, **ՈՒՄ Նախագահ Ն. Հայրապետյան**, **ՈՒԳԸ նախագահ Մ. Ղևոնդյան**:

ՕՐԱԿԱՐԳ

1. Դեկանի տարեկան հաշվետվության հաստատում:

2. Ընթացիկ հարցեր:

Աստվածաբանության ֆակուլտետի դեկանի պաշտոնում 2014-2015 ուստարվա ընթացքում ԵՊՀ գործող կանոնադրության և օրինադրության իրավասության շրջանակներում իրականացրել են ուսումնամեթոդական, գիտական և դաստիարակչական աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը:

1. Ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքներ

Ֆակուլտետի ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների ղեկավարման գործում իրականացվել են որոշակի աշխատանքներ, որոնցից հարկ ենք համարում կարևորել հետևյալները.

Ֆակուլտետի աշխատանքային ուսումնական պլանով նախատեսված մասնագիտական դասընթացների դասավանդման ապահովումը և վերահսկողության իրականացումը:

Մասնագիտական դասընթացների դասավանդման գործում էական տեղ է հատկացվել ուսումնական ծրագրերի, պլանների, ինչպես և ուսումնամեթոդական բնույթի ձեռնարկներ ստեղծելու աշխատանքներին:

Դեկանի գործունեության կարևորագույն կողմերից է բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական գործընթացների, ինչպես նաև ընթացիկ և հանրագումարային քննությունների և ստուգարքների նախապատրաստման և իրականացման աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը:

Դեկանի ղեկավարությամբ ֆակուլտետի բարձրորակ դասախոսություններն ու խորհրդատվությունները տվել են իրենց դրական արդյունքները:

Այսպես, ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակում առկա բակալավրիատում բացարձակ առաջադիմությունը կազմել է 57.3 տոկոս, ամառային քննաշրջանի արդյունքում՝ 71 տոկոս, իսկ հեռակա բաժնում առաջին կիսամյակում՝

93 տոկոս, իսկ 2-րդ կիսամյակում՝ 58 տոկոս: Մագիստրատուրայում՝ համապատասխանաբար 100 տոկոս:

Այսպիսով՝ հաշվետու ուսումնական տարում ֆակուլտետի բակալավրիատում բացարձակ առաջադիմությունը առկա և հեռակա բաժիններում կազմել է 69.8 տոկոս:

Ուսումնական աշխատանքների կարևորագույն տարրերից մեկն էլ մշտական ուշադրության կենտրոնում գտնվող ուսումնական և աշխատանքային կարգապահության հարցերն են: Դեկանատի ջանքերով անհարգելի բացակայությունների թիվը հասցվել է նվազագույնի: Իսկ ահա առավել շատ անհարգելի բացակայող ուսանողները նկատողություններ են ստացել դեկանատի և ռեկտորատի կողմից: Ընթացք է տրվել տարբեր դասախոսների բողոքներին, և ձեռք են առնվել են համապատասխան միջոցներ՝ ուսանողների կողմից կարգապահությունը դասերի ընթացքում ապահովելու և դասավանդման որակը առավել արդյունավետ դարձնելու կապակցությամբ: Նվազագույնի են հասցվել նաև դասախոսների անհարգելի բացակայության դեպքերը:

Ֆակուլտետի դեկանատի հետևողական գործունեությամբ ժամանակին ուսանողներին են տրվել ընթացիկ և հանրագումարային քննությունների գրաֆիկը, ինչպես նաև համապատասխան քննական հարցաշարերը:

Կարևոր ենք համարում նաև նշել, որ Աստվածաբանության ֆակուլտետի դասախոս Զովհաննես Զովհաննիսյանը մասնակցել է արտերկրում անցկացված մի շարք կոնֆերանսների:

2. Գիտահետազոտական աշխատանքներ

Ֆակուլտետի գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացման համար կարևոր խթան հանդիսացավ ֆակուլտետի հերթական «Տարեգրքի» և «Հայ աստվածաբան» գիտական հոդվածների ժողովածուների հրատարակությունը, որոնք ընդգրկվել են ԲՈՂ-ի ցանկում:

2014-2015 ուստարին գիտահետազոտական աշխատանքների առումով ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի համար ավարտվել է բավականին արդյունավետ: Ֆակուլտետի երեք ամբիոններն էլ եռանդ չեն խնայել մնալու իրենց գիտական բարձր մակարդակի վրա և ուսումնական տարին ավարտել են բարձր արդյունավետությամբ: **Ընդհանուր առմամբ ֆակուլտետի 3 ամբիոնների** գիտահետազոտական աշխատանքների արդյունքներն են հրատարակված 5 մենագրությունները և 40-ից ավել գիտական հոդվածները:

Դեկանի ղեկավարությամբ և դեկանատի ջանքերով ֆակուլտետի պահանջներին համապատասխան գործունեություն են ծավալել «Աստվածաբանության», «Կրոնի պատմության և տեսության» և «Հայ եկեղեցու

պատմության և եկեղեցաբանության» ամբիոնները, որոնք իրականացնում են մի շարք մասնագիտական դասընթացների դասավանդումը:

Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում Աստվածաբանության ֆակուլտետը կամակերպեց Հայ-գերմանական հարաբերությունների վերջին 100 տարվան նվիրված կոնֆերանս, որին մասնակցեցին նաև մեծ քանակությամբ հյուրեր Գերմանիայի դաշնության տարբեր քաղաքներից: Կարևոր էր նաև Աստվածաբանության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնակցությունը սույն թվականի ապրիլ ամսին Վենետիկ քաղաքում մասնակցած հայոց ցեղասպանության 100 ամյակին նվիրված գիտաժողովին: Նույն այս ժամանակաշրջանում էլ Աստվածաբանության ֆակուլտետի բակում տեղադրվեց հայոց ցեղասպանության զոհերին նվիրված խաչքարը, որի հանդիսավոր բացմանը մասնակցում էին ԵՊՀ-ի ղեկավարությունը, ինչպես նաև մի շարք այլ հյուրեր:

2014-2015 ուստարում «Կրոնի պատմության և տեսության» ամբիոնը շարունակել է իր գիտական-հետազոտական գործունեությունը: Մասնավորապես անցած տարում ամբիոնի ջանքերով հրատարակվել է մեկ մենագրություն՝ ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Սամվել Մկրտչյանի հեղինակությամբ՝ «Տավուշի տոնական և կրոնական վարքագիծը» թեմայով, ինչպես նաև 11 գիտական հոդվածներ: Բացի այդ, ամբիոնը Անուշավան ժամկոչյանի գլխավորությամբ շարունակել է աշխատանքները «Կրոնը Հայաստանի հասարակական կյանքում» թեմայի շուրջ: Պարբերաբար անցկացվել են նաև գիտական բանավեճեր, տեսական և մեթոդական սեմինարներ, որոնց ընթացքում քննարկվել են կրոնների պատմության, համեմատական կանոնագիտության և դասավանդման մեթոդիկայի հետ կապված արդիական հիմնահարցեր:

2014-2015 ուստարում «Աստվածաբանության» ամբիոնը պրոֆեսոր Ռաֆիկ Վարդանյանի գլխավորությամբ շարունակել է իր ուսումնասիրությունները գիտական թեմայի շրջանակներում՝ «Դրվագներ հայ աստվածաբանական մտքի պատմությունից»: Նույն ուստարում ամբիոնը արդեն հրատարակել է 15 գիտական հոդված: Բացի այդ, հրատարակվել է նաև նույն ամբիոնի դասախոս Աննա Օհանջանյանի «Բանալի ճշմարտութեան» երկը:

2014-2015 ուստարում «Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության» ամբիոնում նույնպես շարունակվել է գիտահետազոտական գործունեությունը: Ամբիոնը Արծրունի Սահակյանի գլխավորությամբ ունեցել է գիտական թեմա՝ «Ակնարկներ հայ եկեղեցու պատմության» վերնագրով, որի շուրջ հրատարակվել է

շուրջ 15 գիտական հոդվածներ: Բացի այդ, ամբիոնի դոցենտ Աշոտ Գագիկի Մանուչարյանը հրատարակել է «Վիճագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ, 9-14-րդ դարեր» թեմայով հետազոտությունը, իսկ ահա ամբիոնի պրոֆեսոր՝ Արծրունի Սահակյանի հեղինակությամբ հրատարակվեցին մի քանի աշխատություններ, որոնցից են «Հայ հին վիպական ավանդույթը և 2-րդ դարի պատմագրությունը», ինչպես նաև «Մովսես Խորենացու հայոց պատմության բնագրի պատմություն» թեմաներով մենագրությունները: Բացի այդ Արծրունի Սահակյանը երկրորդ անգամ պաշտպանեց դոկտորական ատենախոսությունը՝ այս անգամ էլ ստանալով բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ ահա Լիլիթ Աշոտի Պողոսյանը ստացել է դոցենտի կոչում:

Հաշվետվությունը հաստատված է Աստվածաբանության ֆակուլտետի խորհրդի 2015 թ. նոյեմբերի 13-ի նիստում՝ (արձանագրություն N 1):

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅ
Ժամկոչյան**

պ.. գ. թ.դոց. Տ. Անուշավան եպս.

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

պ.. գ. թ.դոց Ա. Յ. Բալյան